

## Կ Ա Լ Ո Տ Ի Ն Մ Ի Ը Ս Ը Ց

Կոլոտ ոչ միայն ժշ պատրիարք մըն է, այլ նաև կատարելագէտ գրական ու գրասէր հայ վարդապետ մը: Սրբազան եւ արտաքին ուսումները, որոնց հիմը գրած էր Ամրտուլու Դաստիարակ մէջ, մշակեց Ս. Կարապետ եւ յառաջ տարաւ պատրիարքական Աթոռին ալ վրայ:

Իբր բեմբասաց մասնաւորապէս կը յիշուի իր ժամանակին հրատարակուած ու թարգմանուած (գեռ ձեռագիր) գրքերուն ճակատը կամ յիշատակարաններուն մէջ՝ Վարդապետ Աստուածաբան Կոլոտի կամ Աստուածաբան Վարդապետ տիտղոսով: Իրաւ որ ժամանակի մոլութիւններէն թէ նորութիւններէն մէկն էր Աստուածաբան կոչուելու տենդը. այնպէս որ գրեթէ բոլոր պատրիարքներ ու Կաթողիկոսներ, նուիրակներ եւ աչքի զարնող վարդապետներ՝ անպատճառ Աստուածաբան, Կոլոտի, Կերճի, Կալատարոյ, Կոլոտի, Կոլոտի եւ այլն ըսուելու մարմաջ մ'ունէին: ԺԷ. ու ԺԸ. դարու հրատարակութիւններուն ճակատներն ու Յիշատակարաններն այս նկատմամբ շատ ճոխ են եւ շատ ալ ճոռոմ: Հայ. Եկեղեցւոյ Վարդապետ աստիճանն ու տիտղոսը, որ ճշգիւ կը համապատասխանէ արդի Docteurին, արդէն անոնց կը տրուի, որոնք աւարտած են Աստուածաբանական ուսումներու ընթացքը. եւ վարդապետ ըսուած ատենը կը հասկցուէր Ծայրագոյն Վարդապետ: Ոչ-ծայրագոյնները Աթեղայ կը կոչուէին: Բայց շատ մը իմացումներու հետ վարդապետի իմացումն ալ փոխուած էր ժամանակներու կամ բարբերու ընթացքին մէջ եւ բուն վարդապետներն ուրիշ վարդապետներէն զանազանուելու համար սկսած էին Աստուածաբան տիտղոսով ճոխանալ թէ արժանապէս եւ թէ ձրիապէս:

Անտարակոյս՝ արժանաւորներէն էր Կոլոտ իր դարուն նորութեան մէջ ալ, երբ զինքը մատ-